

ԻՍԱԲԵԿԵԱՆ

Ներկայիս, Երեւանի Գեղարուեստի Պետական Ինստիտուտ կը կոչուի այն հաստատութիւնը զոր այսօր կը ղեկավարէ ռեկտոր՝ Արամ Իսաբեկեանը: Երէկ, նոյն բարձրագոյն հաստատութիւնը միացեալ անուն մը կը կրէր թատերականի հետ:

Պատմականօրէն, թատերական եւ գեղարուեստի ինստիտուտները հիմնադրուած են 1944 եւ 1945 թուականներուն, որպէս անջատ հաստատութիւններ եւ այդպէս ալ գործած են մինչեւ 1952 թուականը: Յիշեալ թուականէն սկսեալ, կոչուելով Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստիտուտ, շարունակած են իրենց արդիւնաշատ գործը մինչեւ 1994 թուականը:

Այս թուականէն չորս տարիներ առաջ, երիտասարդ նկարիչ Արամ Իսաբեկեան դառնալով տուեալ հաստատութեան գեղարուեստի բաժնի պրոռեկտոր, եղած է ջատագովը այս երկու միացեալ հաստատութիւններու ինքնուրոյնութեան վերադարձին: Ծրագիր առաջարկ մը, որ գործադրութեան դրուած է 1994ին եւ Իսաբեկեան Արամը դարձած է Գեղարուեստից ինստիտուտի ռեկտոր:

Գեղարուեստի այս ինստիտուտը իր հիմնադրման օրէն ունեցած է երկու մասնագէտ ռեկտոր, առաջինը՝ ակադեմիկոս եւ յայտնի քանդակագործ Արա Սարգսեանը, եւ երկրորդը՝ երիտասարդ Արամ Իսաբեկեանը:

Գեղարուեստից ինստիտուտը, այս տարի ունի 390 ուսանող: Ունի երկու ֆակուլտետ, մէկը՝ կերպարուեստի, որ կ'ընդգրկէ գեղանկարի բաժինը նաեւ քանդակի, կրաֆիկային արուեստաբնական բաժինները եւ երկրորդը՝ դեկորատիւ-կիւարական արուեստի եւ տիպայնի ֆակուլտետը, որ ունի նաեւ զգեստի եւ կտորի մոտելաւորման բաժին:

Յիսուն տարիներու ընթացքին, Երեւանի պետական գեղարուեստի ինստիտուտը մեր ժողովուրդին տուած է 1928 շրջանաւարտ, որոնցմէ աւելի քան երեսուն հոգին են սփիւռքահայ շրջանաւարտներ:

Ժամանակի ընթացքին, այս հաստատութեան մէջ դասախօսած են Մարտիրոս Սարեանը, Գարրիէլ Կիւրճեանը, Յակոբ Կոջոյեանը, Արա Սարգիսեանը, Սուրէն

Ստեփանեանը, ինստիտուտի հիմնադրման օրէն առ այսօր «Իգըր» փայլուն գիրքի հեղինակ յայտնի գեղանկարիչ՝ Էդուարդ Իսաբեկեանը, ուրեմն, ամբողջ յիսուն տարի:

Անուններ վերոյիշեալները, որոնցմով մեր ժողովուրդը հպարտանալու իրաւունք ունի:

Որպէս փաստ, արձանագրենք այստեղ, որ Հայաստանի նկարիչներուն 90 առ հարիւրը շրջանաւարտներ են այս հաստատութենէն: Տանք մէկ քանի հռչակի հասած անուն. Գրիգոր Խանճեան, Սարգիս Մուրատեան, Անատոլի Պապեան, Հենրիկ Սիրազեան, Սերկէյ Պաղտասարեան, Ռուբէն Աղալեան, Ռոպերթ Էլիբեկեան եւ բազմաթիւ ուրիշներ:

Մեր այն հարցումին, որ Գեղարուեստից ինստիտուտը իր տրամադրութեան տակ ունի՞ բաւարար մասնաշէնքեր եւ ինչպէ՞ս է հաստատութեան վիճակը, գեղանկարիչ տնօրէնը կը պատասխանէ.

- Ելնելով ամբողջ երկրի նիւթական պայմաններից մեկի պէտք է հասկանալի, որ այսօր, մեր պետութիւնը կարելիութիւնը չունի ամէն տեղ հասնելու: Բայց մեր պայմաններն էլ եւ շէնքային եւ նիւթատեխնիկական իմաստով հեռու են նախանձելի վիճակ պագելուց: Կարող եմ ասել բոլոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները նկատի առնելով, որ մեր ինստիտուտի պայմանները բոլորի մէջ ցածրագոյնն: Բայց վերջերս, կրթութեան եւ գիտութեան նախարար՝ Արմենակ Ղազարեանը, խոստացաւ բարելաւել մեր պայմանները: Միսիթարական է սակայն, որ կայ մի հասունցած մտածում՝ որ մեր ինստիտուտը ստանայ Ակադեմիայի կարգավիճակ:

Հարց կու տանք Իսաբեկեանին, թէ ինչպէս կ'ըլլայ, որ Հայաստանը մեծ դրժւարութիւններ դիմադրաւելով հանգերձ, այս պայմաններու տակ, աւելցած է մեր նկարիչներու թիւը:

Համոզուած եմ, կը պատասխանէ ան, որ մեր նկարիչների բիւի մեծանալը, հակառակ մեր երկրի մէջ տիրող պայմանների - բխում է մեր ժողովրդի տաղանդաւոր լինելուց եւ իսկապէս շնորհալի երիտասարդների շատ եմ:

Ու շարունակելով իր խօսքը կ'աւելցնէ. 1994-95 ուսումնական տարին մեկն սուել են 60 շրջանաւարտ: Իսկ ընդունւողների բիւր եղել է 80 հոգի, որոնցից 40ը պետական պատուէրով, 40ը վնարովի: Դիմողների բիւի առատութիւնը, որոնք ինստիտուտ են ընդունւում մրցոյթից յետոյ, նորից հաստատում է, որ մեր ժողովրդի մօտ մեծ է սերը հանդէպ արուեստի:

- Ունի՞ք նոր ծրագիրներ, ինստիտուտին յատուկ:

ԹՈՂ ՀԱՅԱՍ

ՏԱՆՔ ԽԼՈՍԻ

Թորոս Թորանեան

- Այո՛, կայ առաջարկ ուսումնական
 և որ կարգավիճակ ունենալու կապակ-
 ցութեամբ: Այսպէս, կրթութիւնը կը լինի,
 հիւնդաստիճան - եօթնամեակ, պահալար,
 քոլէճ, մագիստրոս եւ ասպիրանտուրա -
 այս բոլորը ակադեմիայի շրջանակում: Եւ
 մենք կը հասնենք դրան, որպէսզի գեղար-
 ուեստի ուսմունքը դրուած լինի ամենա-
 լուրջ հիմքերի վրայ:

Ինչպէս ասացի, այս բոլորին հասնելու
 համար ունենք կարիքը շէնքային լրիւ բա-
 ւարարուածութեան, որպէսզի լապորիա-
 տորիաները կահաւորենք ժամանակակից
 մասնագիտական սարքաւորումներով, որը
 անհրաժեշտ է մասնաւորաբար տիգայնի,
 մոտեխաւորման եւ կրաֆիկայի բաժինների
 համար:

Մեր հաստատութեան յաջողութիւննե-
 րը, կարող են միայն պատիւ բերել մեր
 հանրապետութեանը:

Շուտով նշելու ենք մեր ինստիտուտի
 հիմնադրման 50ամեակը: Անաշին օրը
 ազգային պատկերասրահում կը բացուի
 մինչեւ այսօր գոհուած դասախօս ու շրջ-
 ջանաւարտ նկարիչների գործերի ցուցա-
 հանդէս: Իսկ երկրորդ օրը նկարիչների
 Միութեան երկու ցուցասրահներում կը
 բացուի ցուցահանդէս մեր ստեղծագոր-
 ծող շրջանաւարտների եւ դասախօսների
 գործերով:

Կը ցուցադրուեն նաեւ ուսանողների
 գործերը:

- Իսկ ռեկտորի՞ գործերը: 4
- Այո, երկու աշխատանքով: 7
- Մի՞թէ այս բոլոր գործերը չեն ազ- 8
- դեր ձեր ստեղծագործական աշխատան- 9
- քին վրայ: 10

- Գործը, որ անում եմ, նուիրումով եմ
 անում, որով ժամանակիս մեծ մասը խըլ-
 ւում է: Այս կապակցութեամբ ցուրտ-
 ամեռը ինձ օգնութեան է հասնում. քանի
 այդ ամիսներին, ինստիտուտը հարկադ-
 րաբար փակ լինելով, ես ստիպողորբար
 փակում եմ արուեստանոցիս մէջ եւ ցըր-
 տի դէմ պայքարում՝ նկարելով: Եթէ ցո-
 րենին հունձձք ամրանն է, ապա իմ
 հունձձք՝ ամրանը. եւ այդ էլ անկուշտ աշ-
 խատանքի արդիւնք:

- Ունի՞ր անհատական ցուցահանդէսի
 ծրագիր: 1

Այս, ունիմ, եմ շնորհ շնորհով, Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսների ընթացքում երբ գործուղուելու եմ Փարիզ, յոյս ունեմ կ'աշխատեմ այդտեղ արուեստի կենտրոնում եւ ինձ կը յաշտուի եանդէս գալ անհատական ցուցահանդէսով: Նախատեսում եմ նաեւ 1996ին Երեւանում ներկայացնալ մեր արուեստի հասարակութեանը անհատական ցուցահանդէսով:

Արամ Իսաբեկեանը նկարիչներու զաւակ է: Հայրը՝ Էդուարդ Իսաբեկեանը՝ վաստակաւոր նկարիչ, մայրը՝ Նոյնպէս նկարիչ էր՝ Արփիկ Նալպանտեան, քուին՝ Նոյնպէս նկարիչ, Դիմիտրի Նալպանտեան:

Երիտասարդ է, կրնայ իր ուժերը նուիրաբերել եւ ինստիտուտին եւ սեփական ստեղծագործական աշխատանքներու, տակաւին երկար տարիներ:

Այսպէս, Հայաստանը կը խօսի նաեւ նկարչական լեզուով: